ը գտնելով Պարթամանը՝ որ իր եղբօրորդին էր։ Այս դէպքը առիթ կ'ըլլայ որ Հասմայեցիք և Պարթեւք իրարու մէջ պատերազմ բանան, բայց Աշխադար մէջտեղէն կ'անհետանայ այլ եւս։ Ազգային աւանդութիւնը՝ ինչ որ կ'ըսէ Արտաւազդի վրայ, Աշխադարի հետ միացնելու համար յանդուգն կարծիք մը միայն կարելի է յայտնել թէ Պարթամանիրի կուսակցութենէն հալածուած փախչելու ատեն, Արտաշատի հռչակաւոր կամուրջէն Երասխ գետն ընկեր է։ Գիտելու է որ մինչ Խորենացի կ'ըսէ « անցեալ զկամուրջն Արտաշատու՝ որսալ կինճս և իշավայրիս զակամբք Գինայ », Շիրակոր առասպելը կը դրէ « Եւ ելեալ ի վերայ կամրջին գետոյն վասն յանցանելոյ, և այլէն շարժեալ զնա այսոյն պղծոյ՝ անկաւ ի գետն և կորեաւ »։

Հուսկ՝ եթէ՝ չփորձուիր արդար չարք բառին յառաջ եկած համարինք, եթէ՝ Աշխադարի անունին, յամենայն դէպս դեւ մը չէ, ինչպէս կը դրէ « Հին Հաւատք Հայոց »։

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

# ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԸ

## ՆՈՐԱԳԻՒՏ ՀԱՏԱԿՈՏՈՐՆԵՐ

(Նախընթացն տես էջ 7)

Ա. ԹՈՒՂԹ, էջ բ, ՍԻՒՆ ա

...... եթէ զոք հա
.... չխմանան. և իբր
և ոչ գտանի արտաքին թշ
նամի, ընդ անձինս իւրե
անց մարտ եղեալ կառին։
ի դէպ իսկ ելանէ բան մարգ
արէին ի վերայ նոցա, այր
առ քաղցի իւրոյ տաէ շրջ
եցի և կերիցէ զկէս անձ
ին իւրոյ։ Նմին և աէրն
ինքն առէ, ամենայն
ատն և թագաւորութին որ
յանձն իւր բաժանի, ոչ կայ
...... ատն
Արդ զի ..............
ցիս. զի այրիս, զի բարբ
ոքիս, զի շիջանիս, զի
կոչես ի խորհուրդս զայ
նոսիկ որոց զոգիոց ձեր

ՏՊ. էջ 183

... և եթէ հար-
կանեն՝ չխմանան. և իբր-
և ոչ գտանի արտաքին թըշ-
նամի, ընդ անձինս իւրեանց
մարտ եղեալ կառին։
Ի դէպ իսկ ելանէ բան մար-
գարէին ի վերայ նոցա. « Այր, ասէ,
առ քաղցի իւրում շրջեա-
ցի և կերիցէ զկէս անձին
իւրոյ »։ Նման զմին և Տէրն
ինքնին ասէ. « Ամենայն
տուն և թագաւորութին՝ որ
յանձն իւր բաժանի, ոչ կարէ
կալ հաստատուն »։
Արդ զի՞ կռծիս, զի՞ մր-
ցիս, զի՞ այրիս, զի՞ բար-
բոքիս, զի՞ շիջանիս, զի՞
կոչես ի խորհուրդ զայ-
նոսիկ, որոց զոգիսն ձեր

digitised by A.R.A.R.@

ի ձէնջ ճաճճոյ քաղեալ է.
զանապականդ յապակա
նութիւն, և զապականելի
մարմինդ գիշաքարշ
արարեալ, իբրև զագիր
մեռելոտիս ի բաց ընկեց
եալ ..աքէն զայդ կա
.... .. ծածկեցելս զխորհ
...... առւթ....

ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է
զանապականդ յապակա-
նութիւն, և զապականելի
մարմինդ գէշաքարշ
արարեալ՝ իբրև զագիր
մեռելոտի ի բաց ընկեց-
եալ։ Ապաքէն զայդ կա-
միս, զի ծածկեսցի խոր-
հուրդ ամպարշտութեանդ.

Ա. ԹՈՒՂԹ, ԺԷ բ, ՍԻՆ. բ

ՏՊ. էջ 184

ընդ աւրինաւք ...
արդ զբանս զայս մեծ
վաղվաղակի կատարեա
արքայ. զաւր զաւմարեա
և զունդ կազմեա, խաղա
գնա դու յերկիրն Քուշ
անաց, և զամենայն ազ
գս ճառաքեա և անցոյ
ընդ պարիս գուռն ի նե..
ս, և դու քեզ անդէն արա
բնակութիւն։ Յորժամ փա
կես և արգելցես զամե..
նեան ի հեռաւոր աւտար..
թեան կատարին խորհու
րդք կամաց քոց, .....
երե... ......նիս մերու..
տի..ս դու եր.րին Քուսա
նաց[1] և ոչ Յո.ք ելանե.
ընդ քո իշխան..., բա
յց միայն զ...... ..
խառնէից բարձ ի ....
Եւ հաճոյ թուեցաւ բանն.
թագաւորին և մեծամ..
ացն որ էին ի նմի. ....
Հր.. արտակ գր.. ....
գէո..նս առ..... ..
մենա.ն կո[2].... ...
ութեան իւրոյ։ Եւ ... ....
Հրովարտակին.

.. և աշխարհն Յունաց հնազանդեալ մացէ
ընդ օրինօք քովք։
Արդ զբանս զայսոսիկ
վաղվաղակի կատարեա դու,
արքայ. զօր զումարեա
և զունդ կազմեա, խաղա
գնա դու յաշխարհն Քուշա-
նաց. և զամենայն ազգս
ժողովեա և անցո
ընդ պահ գուռն ի ներքս.
և դու անդէն արա քեզ
բնակութիւն։ Յորժամ ար-
գելցես և փակես զամենե-
սեան ի հեռաւոր օտարու-
թեան, կատարին խորհուրդք
կամաց քոց.
և որպէս երեւիս մեզ ի գնիս մերում,
տիրես դու և երկրին Քուշա-
նաց, և Յոյնք խոկ ոչ ելանեն
ընդ քո իշխանութիւնդ։ Բայց
միայն զադանդ քրիս-
տոնէից բարձ ի միջոյ։
Եւ հաճոյ թուեցաւ խորհուրդն
թագաւորին և մեծամեծացն,
որ էին ի նմին բանի.
Հրովարտակս գրէր, մնդա-
գեսպանս առաքէր յա-
մենայն անկլս տէրու-
թեան իւրոյ։ Եւ այս է պատճէն
Հրովարտակին։

---

1. Անունդ վերը ուղիղ գրեց. իսկ այս կարծեմ անուշադրութեան հետեւանք է։ — 2. կողմանս։

digitised by A.R.A.R.@

Բ ԹՈՒՂԹ, էջ ա, ՍԻՒՆ ա

............ իբրև
(կարի դառնապէս ե)լաց ետ
(ցնա զԹագաւորու)Թիւն զ
(Հազար ամ: Իբ)րև ծնաւ
(զմիւս եւս որդին անո)ւանեաց
(զնա[1] Որմ)իզդ
(եՀան զԹագաւորուԹի)ւնն
(յԱրՀմնէ և ետ ցՈրմիզդն)
(և ասէ ցնա. ցայժմ ես քեզ)
(յաշտ արարի, արդ դու ին)ձ
(արա: Եւ Որմիզդ) արար
(զերկին և զերկիր). իսկ

ՏՊ. էջ 221

Եւ իբրև
կարի դառնապէս ելաց, ետ
ցնա զԹագաւորուԹիւնն (ըզ-?)
Հազար ամ: Իբրև ծնաւ
զմիւս եւս որդին, անուանեաց
զնա Որմիզդ.
եՀան զԹագաւորուԹիւնն
յԱրՀմնէ. և ետ ցՈրմիզդն.
և ասէ ցնա. ցայժմ ես քեզ
յաշտ արարի, արդ դու ինձ
արա: Եւ Որմիզդ արար
զերկին և զերկիր. իսկ ...

Բ ԹՈՒՂԹ, էջ ա, ՍԻՒՆ բ

.. այդ ի բարւոյն անձու
ն զգոյացուԹիւնն: Եւ
..ենայն որ ոչ այդպէս
. ի նա չարին արարածք
խառնեալ է: Եւ ամեն
այն մարդիկ մոլորեալ են
որք ասեն զմահ աստուած արար.
և չար և բարի ի նմանէ
լինի: Մանաւանդ որպէս
ո քրիստոնեայքն ասեն
եԹէ աստուած նախանձոտ է վասն
Թզոյ միոյ ի ծառէ ուտե
յոյ աստուած զմահ արար, և զա
..................... զպառ
ո. Հ......................
նախա......................
մարդ ունի Թող.......
մար..... ..ր զայս ..

ՏՊ. էջ 221

....., այդք ի բարւոյն անձնուն
զգոյացուԹիւն. և
ամենայն որ ոչ այդպէս
է, ի նա չարին արարած
խառնեալ է: Եւ ամե-
նայն մարդիկ մոլորեալ են,
որ ասեն երկ զմահ Աստուած արար,
և չար և բարի ի նմանէ
լինին. մանաւանդ որպէս
քրիստոնեայքդ ասեն՝
ԹԷ Աստուած նախանձոտ է, վասն
Թզի միոյ ուտելոյ ի ծառոյն
Աստուած զմահ արար, և զմարդն
ճարկ ընդ այնու պա-
տուՀասի: Զայդպիսի
նախանձ և ոչ մարդ առ
մարդ ունի, Թող ԹԷ Աստուած առ
մարդիկ. զի որ զայս առն՝ ...

Բ ԹՈՒՂԹ, էջ ա, ՍԻՒՆ գ

Միս ուտ ... ...
մեղք, և ինքեանք ...
ել ոչ կամին: (Կին առն?)[2]
անձուց արժան է բայց ..
քեանք Հայել ի նա ոչ կամ
ին: Կարասի առեն որ ժող

ՏՊ. էջ 223

Միս ուտել, ասեն, ոչ են
մեղք, և ինքեանք ու-
տել ոչ կամին. կին
անձնել արժան է, բայց
ինքեանք և Հայել ի նա ոչ կա-
մին. կարասի որ ժողովէ,

---

1. «Անուանեաց»էն մինչև «Որմիզդ» տողին դիրքը ուրիշ բառ եւս ենթադրել կու տայ, որ տպագրին մէջ ալ կը պակսի: — 2. Դժուարընթեռնլի:

digitised by A.R.A.R.@

### Բ ԹՈՒՂԹ, էջ ա, ՍԻՒՆ գ

ովէ յոյժ մեղք են ... ..
զքաստութիւնն առաւել զոյ..
յարգեն զխշուառութիւն
պարսաւեն զյաջողուած.
ծաղր առնեն զանուն բա.
.........................
... այպան .....
. անչքութիւն հ...
.. յարգեն զան...

### Բ ԹՈՒՂԹ, էջ բ, ՍԻՒՆ ա

............կան
..... կամ արարէք
... առ բան պատասխանի,
. ամ արեք եկայք ի դուռն
յանդիման լերուք մեծի
հազարապետին:
Անուանք եպիսկոպոսաց որք ժո
ղովեցան Յայրարատ գաւառ[1]:
Յովսեփ եպիսկո
պոս Այրարատոյ:
Սահակ եպիսկոպոս Տար
....
Մեղիտէ եպիսկոպոս Մա
նազկերտոյ
Եզնակ եպիսկոպոս Պար[2]

### Բ ԹՈՒՂԹ, էջ բ, ՍԻՒՆ բ

..այ. ..իսկոպոս ..
ձեւացեաց
Երեմիա եպիսկոպոս
Ապահունեաց
Այս ամենայն եպի
սկոպոսք և բազումս ևս
այլք, և պատուական
երիցունք ի տեղեաց տեղ
եաց հանդերձ սուրբ ուխտիւն
եկեղեցւոյ, միաբանք

### ՏՊ. էջ 223

առեն, յոյժ մեղք են, բայց
զաղքատութիւն առաւել քան զյոյժ զոլեն.
յարգեն զթշուառութիւն,
և պարսաւեն զյաջողուածս,
ծաղր առնեն զանուն բախ-
տի, և զփառաւորան
յոյժ այպանեն. ?
ուրեն զանչքութիւն հան-
դերձից և յարգեն
զանարգս քան զպատուականս.

### ՏՊ. էջ 225

Արդ երկու իրք կան
առաջի ձեր. կամ արարէք
բան առ բան նամակիդ պատասխանի,
և կամ արիք ի դուռն եկայք,
յանդիման լերուք մեծի
հրապարակին:
Անուանք եպիսկոպոսացն որք
պատասխանեցին նամակին
Յովսէփ եպիսկո-
պոս Այրարատոյ,
Սահակ եպիսկոպոս Տա-
րօնոյ
Մելետ եպիսկոպոս Մա-
նազկերտոյ
Եղնիկ եպիսկոպոս Բագրեւանդայ,

### ՏՊ. էջ 228

Եղբայր եպիսկոպոս
Անձեւացեաց
Երեմիաս եպիսկոպոս
Ապահունեաց
Այս ամենայն եպիս-
կոպոսք և բազում քորեպիս-
կոպոսք և պատուական
երիցունք ի տեղեաց տեղ-
եաց հանդերձ սուրբ ուխտիւ
եկեղեցւոյ, միաբանք

---

1. Այս վերնագիրը բոլորգիր է, բայց նոյն մեծանով:
2. Շատ հետաքրքրական տարբերութիւն մը, որ դժբաղդաբար անուան կէս ջնջուելը չենք կրնար Եզնիկը իր գաւառական թեմէն՝ Բագրեւանդէն հանելով Պար... ով սկսող թեմի մը եպիսկոպոս դնել: Ենթադրութիւնները ընել աւելորդ կը համարինք, քանի որ որոշ կէտի մը պիտի չյանգինք:

digitised by A.R.A.R.@

Բ ԹՈՒՂԹ, էջ բ, ՍԻՒՆ բ

և միահաւանք միահամ
ու ժողովեալ ի Թագաւոր
անխոս ուեղիսն ի յԱրաա
շատ հաւանութեամբ նախար
արացն և ամ...........
մութ.............
պատասխանի պարուկ
Ցովսէփ եպիսկոպոս
հանդերձ ամենայն միա
...եղո.. ...... մեծ

ՏՊ. էջ 228

և միահաւանք միահա-
մուռ ժողովեալք ի Թագաւո-
րանխոս քաղաքն յԱրաա-
շատ, հաւանութեամբ մեծամեծ նախա-
րարացն և ամենայն բազ-
մութեամբ աշխարհին արարին
նամակին պատասխանի։
Ցովսէփ եպիսկոպոս
հանդերձ ամենայն միա-
բանելովքս մեծամեծաց մինչև ...

Բ ԹՈՒՂԹ, էջ բ, ՍԻՒՆ գ

քան ...
հա...
...............
րի, և ...
և իմաց...
և իբրև ...
զնորա ....
քարկոծ...
արքայ ...
իմ...
....
....
ցիր...
Այ...
րոց ...

ՏՊ. էջ 230

քան զընութիւն մարդկան ի վեր
համարէիք զնա, հաւաստաց նա
յԱստուած կենդանի յարարիչն երկնի և երկ-
րի, և բան առ բան եղոյծ
և իմացոյց ձեզ զօրէնս ձեր։
Եւ իբրև ոչ կարացին բանիւ
զդէմ ունել նորա,
քարկոծեալ մեռաւ յԱրմզդէ
արքայէ։ Եւ եթէ հաւատա-
րիմ համարիցիս զմեր բանս
լսել, ի բազում տեղիս այդրէն յաշ-
խարհիդ ձերում գտանին գիրք նորա, ընթեր-
ցիր և անսխալ տեղեկանաս։
Այլ վասն օրինացս մե-
րոց ...

Գ ԹՈՒՂԹ, էջ ա, ՍԻՒՆ ա

.... զում..
... յիւրում աշ..
... եղբաւրորդիք էին
.. երկու .. սուրբ ուխտին
..ութեան .րեաց և
... վասն նոցա յար..
... և էառ իշխանութ..
.ենաց նոցա, մերժեաց
եհան զնոսա յաշխարհ
.. զի մի զարձցին անդրէն
հալածեաց և փախոյց զա
մեայն զմիայնակեացս
յաշխարհէն (որք?) հայհոյ
էին զանդարձ ապաշխար

ՏՊ. էջ 329

... և ի մէջ խաղաղութեան արար (բա-
զում?) խռովութիւն։
Եւ անդէն իսկ յիւրում աշխար-
հին եղբօրորդիք երկու
էին նորա ի սուրբ ուխտին
առաքինութեան. զրեաց և
եցոյց վասն նոցա յարքու-
նիս, և էառ իշխանութիւն
ի վերայ կենաց նոցա, մերժեաց
և եհան զնոսա յաշխարհէն,
զի մի այլ դարձցին անդրէն։
Հալածեաց և փախոյց զա-
մենայն միայնակեացս
աշխարհին, որք հայհոյէին
զանդարձ ամբարշ-

digitised by A.R.A.R.@

Գ. ԹՈՒՂԹ, ԷՋ ա, ՍԻՒՆ ա

ուրխն նորա։
Արար (ե?) կատարեաց
զամենայն չարիսն ընդ
դէմ ճշմարտութեան, զոր
... ոչ . խոէին . նաւրէն

Գ. ԹՈՒՂԹ, ԷՋ ա, ՍԻՒՆ բ

..կ առանց զինու ալե.
...րքն իցեն, նոյնպէս
և վասն վաշխառուր հեռե.
ակացն։ Եւ իբրև առաջ
եաց զԹիւ համարոյ բազմ
ութեանն, տաւել փութաց
ու ուսանել ևԹէ քանի. ..
.ն պարապլուխ քաջ նահա
տակացն, զի երխ ընդ մի
այ պատրաստեսցէ առ մի
մի ի նոցանէ, բաղ զայլ
ամենայնի։ և զրաւշի.
իւրաքանչիւր անգեկան
այր ի նմանէ, երկ ի քան
ի՞ զունդ զաւրքն բարժանե
ցին, և ո՞ որ ի նոցանե
առաջարք լինիցին, և որ զաւ
րագլուխք, յորմէ՞ կողմա
նէ յառաջ ոք մտանիցէ,
և զինչ անուանք իւր.
քանչիւր համհարզաց

Շարայարելի

Տպ. էջ 329

ութիւն նորա, որ
արար և կատարեաց
զամենայն չարիսն ընդ-
դէմ ճշմարտութեանն. և զոր
ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն

Տպ. էջ 331

... մերկ առանց զինու ալեւ-
նաւորք իցեն. նոյնպէս
և վասն վաշխառուր հեռե-
ւակացն։ Եւ իբրև լուաւ
զԹիւ համարոյ բազ-
մութեանն, տաւել եւս փութա-
ցաւ ուսանել՝ թէ քանիք իցեն
պարապլուխք քաջ նահա-
տակացն, զի երխ ընդ միոյ
պատրաստեսցէ առ մի
մի ի նոցանէ։ Թող զայլ
ամենայն, այլ և զրոշից անգամ
իւրաքանչիւրոց անգեկա-
նայր ի նմանէ. և թէ քանի
զունդ զզօրսն բաժանե-
ցեն, և որ ոք ի նոցանէ
առաջարք լինիցին, և որ զօ-
րագլուխ յորմէ կողմանէ
յառաջ մտանիցէ,
և զինչ անուանք իւրա-
քանչիւր համհարզացն իցեն

Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

### ՀԱՅՈՑ ՎՐԱՅ

### ՕՏԱՐ ՊԱՏՄՉԱՑ ՔՈՎ

*Հայկական բանուածքներ. — Հայկական տարազը. ժողովրդական և նախարարական. — Հերալդարութ. Սորաբանք և փառասոր համաձայնութիւնք։*

### Ա

Հայկական հին ազգագրութեան վրայ այնքան սակաւաթիւ տեղեկութիւն ունինք, որ ագահութեամբ պէտք է ընդունինք ամէնէն փոքրիկ մէկ ակնարկն ալ, որուն կը հանդիպինք օտար պատմչի մը քով։

Հայաստանի վերմակներր մինչեւ Բիւզանդիա կու գային. և պէտք է ենթադրել թէ անոնք յարգ մը, եզակիութիւն մը ունէին։ Սիմէոն Մագիստրոս Լոգոթետ այսինքն, ատենադպրաց գլխաւոր, որ պատմութիւն մը շարադրեց (813-912 թուականներուն մէջ, մօտաւորապէս), առիթ ունենալով անգամ մը Բուլղարներու ապստամբութեանց վրայ խօսելու, անոնց մեծութիւնը ցուցնելու համար՝

digitised by A.R.A.R.@